Արձանագրություն N 6

ՀԾԿՀ-19/3-ԷԱՃԱՊՁԲ ծածկագրով էլեկտրոնային ձևով էլեկտրոնային աճուրդի միջոցով համակարգչային սարքավորումների և օժանդակ նյութերի ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

21 դեկտեմբեր 2018թ.
ժամը 15:30

Մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Լիլիթ Մկրտչյանը, անդամներ՝ Ջուլիետա Բաբայանը, Արսեն Թերզիկյանը և քարտուղար՝ Էդգար Շադյանը:

Օրակարգ
Գնահատման արդյունքների ամփոփման մասին

ՀԾԿՀ-19/3-ԷԱՃԱՊՁԲ ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահ Լիլիթ Մկրտչյանը նիստը հայտարարեց բացված և ներկայացրեց՝

1. Մասնակիցների կողմից ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերում հրավերի պահանջների նկատմամբ արձանագրվել են հետևյալ անհամապատասխանությունները՝

ա) 9-րդ չափաբաժնի մասով «ՆՈՐՄԱ ՊԼՅՈՒՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված «Առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիր» հավելվածի տեխնիկական բնութագրում նշված է «կամ համարժեք» բառերը,

բ) 2-րդ և 4-րդ չափաբաժինների մասով «ԱՐՏ ՏԵԽ» ՍՊԸ-ի կողմից «Առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից հրավերով պահանջվող փաստաթղթերի ներկայացման» դիմումը (Հավելված 2) կցված չէ համակարգի համապատասխան դաշտերում:

1.1 Ղեկավարվելով ՀՀ կառավարության 18.05.2017թ. թիվ 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 23-րդ դրույթով՝ նույն օրը համակարգի միջոցով ծանուցել վերոնշյալ մասնակիցներին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

2. «ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՔՈՄՓՅՈՒԹԵՐՍ» ՍՊԸ-ն հայտ ներկայացնելու օրվա դրությամբ ունի օրենքով նախատեսված շեմը գերազանցող 4.000 ՀՀ դրամ ժամկետանց պարտավորություն:

2.1 Ղեկավարվելով ՀՀ կառավարության 18.05.2017թ. թիվ 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 20-րդ դրույթով՝ մերժել «ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՔՈՄՓՅՈՒԹԵՐՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը 16-րդ, 17-րդ, 18-րդ 20-րդ և 21-րդ չափաբաժինների մասով:

2.2 Հաշվի առնելով այն հանգամանքը, որ 16-րդ և 17-րդ չափաբաժինների մասով չկան բավարար հայտ ներկայացրած մասնակիցներ, վերոնշյալ չափաբաժինները «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով հայտարարվում են չկայացած: 18-րդ, 20-րդ և 21-րդ չափաբաժինների մասով սահմանված ժամկետները լրանալուց հետո ծանուցել հաջորդ տեղ զբաղեցրած «ՆՈՐՄԱ ՊԼՅՈՒՍ» ՍՊԸ-ին ներկայացնելու որակավորման փաստաթղթեր:

3. Ընտրված մասնակիցներ ճանաչել՝

- «ՊԱՏՐՈՆ ՌՄ» ՍՊԸ-ին 1-ին, 7-րդ և 8-րդ չափաբաժինների մասով:
- «ՆՈՐՄԱ ՊԼՅՈՒՍ» ՍՊԸ-ին 6-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ և 15-րդ չափաբաժինների մասով:
- «ԷՆ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին 5-րդ չափաբաժնի մասով:

Ընտրված մասնակցներին առաջարկել հրավերով սահմանված ժամկետում կնքել պայմանագրեր:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի

նախագահ	_____	Լիլիթ Մկրտչյան
անդամներ	_____	Ջուլիետա Բաբայան
	_____	Արսեն Թերզիկյան
քարտուղար	_____	Էդգար Շադյան